

# ՄԵՐ ՄԱՍԻՆ

<<Նորթ Վալլի>> խնամքի կենտրոնը 83 մահճակալ ունեցող հմուտ խնամքի հաստատություն է, որը ունի 32 մահճակալ ավելի խիստ խնամք ապահովելու համար և գտնվում է Թահանգայում: Մեր որակյալ պրոֆեսիոնալների թիմը օգնում է հիվանդներին՝ վերականգնվել վիրահատությունից հետո, փասավածքներից կամ լուրջ հիվանդություններից:

Մենք հասկանում ենք հարմարավետ և խնամող մթնոլորտ ստեղծելու կարևորությունը՝ անկախ նրանից, թե մեր հիվանդները մեր մոտ են երկարաժամկետ, թե կարճաժամկետ բուժման համար:

---

**ՄԵՆՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ**
**ՕՐԸ 24 ԺԱՄ**
**ՇԱԲԱԹԸ 7 ՕՐ**

---

11/17

# ԿԱՊՎԵՔ ՄԵՐ ՀԵՏ

Մենք ցանկանում ենք ձեզ սիրով ցույց տալ, թե ինչով ենք մենք տարբեր: <<Նորթ Վալլի>> խնամքի կենտրոնը ընտրելով դուք կարող եք հանգիստ լինել, որ մենք կձգտենք անել ամեն ինչ ձեզ կամ ձեր սիրելի մարդուն գերազանց խնամք ապահովելու համար:




## NORTH VALLEY
NURSING CENTER

www.NorthValleyNursingCenter.com


7660 North Wyngate St.
Tujunga, CA 91042

Phone: (818) 352-1454
Fax: (818) 951-4250


★★★★★

հինգ աստղին համապատասխան որակ

# NORTH VALLEY
NURSING CENTER







**24 HR. SKILLED NURSING & REHABILITATION**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Բարի Գալուստ

NORTH VALLEY
NURSING CENTER

<<ՆՈՐԹ ՎԱԼԼԻ>> ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ
ուր բացառիկ ծառայությունը և գերազանց խնամքը մեր բարձրագույն առաքելությունն է:

Մենք խոստանում ենք մեր բնակիչներին և նրանց հյուրերին ապահովել անկեղծորեն գթառատ և անձնական խնամք մի մթնոլորտում, ուր նրանք իրենց կզգան սիրված, տեղեկացված և հարմար: Մեր աշխատողները պատրաստ են ամեն օր մեր հաճախորդների կարիքները բավարարել և գերազանցել:






# ԹԵՐԱՊԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր փորձառու թերապիայի թիմը նվիրված է՝ ապահովելու բարձրագույն ֆիզիկական, մասնագիտական և լոգոպեդական (խոսքի) թերապիա՝ ապաքինման համար պատշաճ ոլորտում: Անհատականացված ծրագրերի միջոցով հիվանդները զորակցվում են աշխատել վերականգնել առավելագույն ֆունկցիոնալությունը, ինքնուրույնությունն ու կարողությունը հիվանդանոցից դուրս գրվելուց հետո:

Մեր թերապիայի ծառայությունները ընդգրկում են.

- Օրթոպեդիկ և նյարդաբանական վերականգնում
- Խրոնիկական ցավի կառավարում
- Կաթվածից հետո վերականգնում
- Ֆիզիկական ուժի համար մարզում և կառավարում
- Շարժունակության բարձրացում
- Կոորդինացիա և հավասարակշռություն
- Վնասվածքների և ընկնելու կանխում
- Ապահովության իրազեկություն

# ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք տրամադրում ենք անհատականացված 24-ժամյա հմուտ խնամք և վերականգնողական ծառայություններ՝ հարմար և ընտանեկան մթնոլորտում: Մեր թիմը աշխատում է մեր հիվանդների և իրենց ընտանիքի անդամների հետ ամեն իրավիճակի համար օպտիմալ բուժման ծրագիր սահմանելու համար:

Մենք առաջարկում ենք բազմակողմանի կլինիկական ծառայություններ, որոնք ընդգրկում են.

- Ներերակային թերապիա
- Վերքի խնամք
- Ցավի կառավարում
- Սրտային առողջություն և կաթվածից հետո վերականգնում
- Սննդակարգի և ջրահագեցման ծրագրեր
- Շաքարախտի կառավարում և ուսուցում
- Կազդուրիչ խնամք
- Կոորդինացված խնամք բժշկական ղեկավարի և քույրերի ղեկավարի կողմից
- Մեխանիկական օդափոխություն
- Շնչուղիների ծառայություններ
- Շնչառության համար վզի սարքի (tracheostomy) խնամք
- Ներերակային և միջմկանային սննդակարգ (TPN)

# ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Մենք ստեղծում ենք դրական և ոգեշնչող սոցիալական ծրագրեր և անհատականացված ակտիվության ծրագրեր հիվանդի կարիքներին և հնարավորություններին համապատասխանեցնելու համար:

Հատուկ ակտիվության ծրագրերը կարող են ընդգրկել.

- Երաժշտական ելույթներ
- Մարզանքի ծրագրեր
- Զգման վարժություններ
- Կրոնական հանդիպումներ
- Դրսում զվարճանքի միջոցառումներ
- Գիտելիքները ստուգող և պատմության վերաբերյալ խաղեր
- Այգեգործություն
- Էքսկուրսիաներ/զբոսանքներ



